



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

ԱՌԱՐԿԱ

ՀԵՂԻՆԱԿ

ՄԱՐԶ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական կրթությունը դպրոցում

Մաթեմատիկա

Կարինե Մելքոնյան

Արմավիր

Վաղարշապատի թիվ 9 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Ֆինանսական կրթությունը դպրոցում	4
Ֆինանսական բաղադրիչի ինտեգրումը մաթեմատիկայի դասընթացում	7
Մաթեմատիկական տեքստային և հաշվողական խնդիրների լուծում	9
Գործնական և հետազոտական առաջադրանքների դիտարկում	11
Եզրակացություն	14
Գրականություն.....	15

Ներածություն

Ներածությունում հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևավորված են հետազոտության հիմնախնդիրները, նպատակը և խնդիրները:

Կարևորելով ֆինանսական կրթությունը ՀՀ բնակչության շրջանում՝ որպես երկրի ֆինանսական կայունության, ֆինանսական ներգրավվածության և քաղաքացիների տնտեսական բարեկեցության կարևոր նախադրյալ, ՀՀ կենտրոնական բանկը 2007 թ-ից իրականացրել է ֆինանսական կրթության բազմաթիվ միջոցառումներ: Համատեղ քննարկումների արդյունքում ընտրվեցին այն 4 առարկաները, որոնց ծրագրում ինտեգրվելու է ֆինանսական կրթության բաղադրիչը՝

- «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ),
- «Մաթեմատիկա» (2-6-րդ դասարաններ),
- «Հասարակագիտություն» (8-11-րդ դասարաններ),
- «Հանրահաշիվ» (7-11-րդ դասարաններ):

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳՊՐՈՑՈՒՄ» ծրագրի հիմքում դրված են տասն սկզբունքներ, որոնց կիրառումն ավելի արդյունավետ և կառուցողական կդարձնի աշխատանքը:

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական կրթությունը որպես կյանքի հմտություն: Ատօրյայում մարդիկ, անկախ տարիքից գործ են ունենում փողի հետ: Ուստի կարևոր է ձևավորել անհրաժեշտ գիտելիք, հմտություններ, վերաբերկունք և վարքագիծ, որոնք կնպաստեն անձի գիտակցված, արդյունավետ և պատասխանատու ֆինանսական որոշումների կայացմանը: Ֆինանսական կրթությունը չունի մասնագիտական բնույթ. կապված է կյանքի հմտությունների հետ, ինչպես օրինակ՝ լողալը կամ համակարգչից օգտվելը:

2. ՓՈՂԸ ՊԱՇՏԱՄՈՒՆԸ ՉԷ

Փողը որպես գործիքի ընկալումը սովորողների մեջ անհրաժեշտ է ձևավորել վերաբերմունք, որ փողը գործիք է նպատակներին հասնելու և անկանխատեսելի դեպքերին պատրաստ լինելու համար: Փողի՝ որպես գործիքի ընկալումը իրական կյանքում հաճախ հանդիպում են իրավիճակներ, երբ փողը ֆետիշացվում է և ընկալվում որպես նպատակ: Ծրագրի ընթացքում կարևոր է բացառել նման դրսևորումները: Սովորողների մեջ անհրաժեշտ է ձևավորել վերաբերմունք, որ փողը գործիք է նպատակներին հասնելու և անկանխատեսելի դեպքերին պատրաստ լինելու համար: Առանձնահատուկ կարևորություն ունի փողը բարիք գործելու նպատակով կիրառելու գիտակցության ձևավորումը: Երեխաները պետք է համոզվեն ունենան, որ ոչ թե փողն է ինքնին արժեք, այլ կարևոր է դրա՝ որոշակի նպատակներով գիտակցաբար կիրառումը՝ ի նպաստ անձի, ընտանիքի, հասարակության:

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Չկան բացարձակ ճշմարտություններ: Պետք է սովորողներին թույլ տալ ինքնուրույն զարգացնել որոշումներ կայացնելու կարողությունը, այլ ոչ թե ներկայացնել որոշակի պատասխան: Անձնական ֆինանսների կառավարումն ունի սուբյեկտիվ բնույթ՝ կախվա անձից և իրավիճակից: Ֆինանսական կրթության ինտեգրման ընթացքում անհրաժեշտ է քննարկել իրավիճակին համապատասխան հնարավոր լուծումները, այլ ոչ թե տրամադրել պատրաստի արդյունքներ, պետք է սովորողներին թույլ տալ ինքնուրույն զարգացնել որոշումներ կայացնելու կարողությունը, այլ ոչ թե ներկայացնել որոշակի պատասխան: Այս մոտեցումը կօգնի սովորողներին հետագայում գիտակցված, արդյունավետ և պատասխանատու որոշումներ կայացնելու, ինչպես նաև կրելու դրանց պատասխանատվությունը:

4. ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ուսուցման կապը իրական կյանքի հետ՝ խաղերի և խմբային աշխատանքների ձևով, նախագծային աշխատանքներ, էքսկուրսիաների և այցելությունների կազմակերպումը դեպի ֆինանսական կազմակերպություններ: Ֆինանսական կրթության իրականացման ընթացքում ցանկալի է կիրառել ուսուցման աշակերտակենտրոն մոտեցում՝ համադրելով ակտիվ ուսուցման մեթոդները:

- Խաղերի և խմբային աշխատանքների կիրառումը կխթանի սովորողի ինքնադրսևորումը, ինքնակազմակերպումը, իրավիճակին համապատասխան կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու ունակությունը:

- Նախագծային առաջադրանքները կնպաստեն անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու, դիտումներ և վերլուծություն կատարելու, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու, հետազոտության արդյունքները ներկայացնելու կարողությունների զարգացմանը:

- Էքսկուրսիաների և այցելությունների կազմակերպումը դեպի ֆինանսական կազմակերպություններ կարևոր նշանակություն ունի դրանց ներքին աշխատանքին ծանոթանալու և որպես սպառող ինքնավստահություն ձեռք բերելու հարցում:

5. ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՇՏԱԲԻ ԷՖԵԿՏ

Ուսուցչից՝ սովորողին, սովորողից՝ ընտանիքին: Սովորող, ուսուցիչ և ծնող արդյունավետ համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի խթանել ֆինանսական ունակությունների զարգացումը հասարակության բոլոր շերտերում: Ֆինանսական կրթությունը դալորոցում հնարավորություն է տալիս ոչ միայն ձևավորելու անհրաժեշտ գիտելիք, հմտություններ, վերաբերմունք և վարքագիծ սովորողների մեջ, այլև այդ գործընթացին ակտիվորեն ներգրավելու ուսուցիչներին և սովորողների ծնողներին:

6. ԶՈՒԳԱՀԵՌ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Ֆինանսական կրթությունը ինքնին առարկա չէ: Հաշվի առնելով սովորողների առարկայական ծանրաբեռնվածությունը և միջազգային փորձը՝ ֆինանսական կրթությունը ներդրվել է հանրակրթական դպրոցում՝ ինտեգրման եղանակով: Կարևորվում է ֆինանսական կրթության ինտեգրումը առարկայական թեմաներում այնպես, որ դասերի ընթացքում հավասարապես շեշտադրվեն և՛ առարկայական, և՛ ֆինանսական կրթական նպատակները:

7. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Արդյունավետ ինտեգրման տեսանկյունից կարևոր է ֆինանսական կրթության համակարգային մոտեցումն ըստ կրթական մակարդակների:

«Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ),

«Մաթեմատիկա» (2-6-րդ դասարաններ),

«Հասարակագիտություն» (8-11-րդ դասարաններ),

«Հանրահաշիվ» (7-11-րդ դասարաններ):

Ընտրված չորս առարկաները փոխլրացնում են միմյանց և ապահովում ֆինանսական կրթության շարունակությունը: Չուզահեռաբար երկու ուսումնական առարկաների առկայությունը գրեթե բոլոր դասարաններում ապահովում է գիտելիքի և հմտությունների սիներգիկ զարգացում: Բացի այդ, կարևորվում է նաև տվյալ ուսումնական առարկաների ուսուցիչների սերտ համագործակցությունը ֆինանսական թեմաների ուսումնասիրման ժամանակ:

8. ՆՎԱԶՁԱԳՈՒՅՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

Ֆինանսները դինամիկայի մեջ: Ֆինանսական կրթությունը դպրոցում շեշտադրում է բազային նվազագույն անհրաժեշտ կարողությունները, որոնք կօգնեն սովորողներին հետագայում ճշգրիտ կողմնորոշվելու դինամիկ զարգացող ֆինանսական աշխարհում: Ներկայումս համընդգրկուն և ազգային զարգացումները էապես ազդում են նաև ֆինանսական աշխարհի վրա: Չնայած անձնական ֆինանսները կառավարելու հիմնարար սկզբունքներն անփոփոխ են՝ ի հայտ են գալիս ֆինանսական նոր ծառայություններ, գործիքներ և իրավիճակներ: Այս տեսանկյունից ֆինանսական կրթությունը դպրոցում շեշտադրում է բազային նվազագույն անհրաժեշտ կարողությունները, որոնք կօգնեն սովորողներին հետագայում ճշգրիտ կողմնորոշվելու դինամիկ զարգացող ֆինանսական աշխարհում:

9. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարրական, միջին և ավագ դպրոցներ՝ 2-11-րդ դասարաններ: Ֆինանսական կրթությունը շարունակական է: Սկսած տարրական դպրոցից (2-րդ դասարան)՝ պարզից բարդին անցնելու սկզբունքով դա համակարգված շարունակվում է մինչև ավագ դպրոց (մինչև 11-րդ դասարան), ընդ որում՝ բոլոր հոսքերում և ենթահոսքերում: Շարունակականության ապահովումը նպաստում է անձի զարգացման վաղ տարիքից ֆինանսներ կառավարելու հմտությունների ձևավորմանը, որոնք զարգանալու են նրա ողջ կյանքի ընթացքում: Կարևոր է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ուսուցիչների կողմից ուսումնական նյութի հարմարեցումը նրանց հնարավորություններին:

10. ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՃ

Պարզից բարդին անցում Ֆինանսական կրթությունը նպատակահարմար է իրականացնել տարրական 4 կարողություններից աստիճանաբար բարդին անցնելու սկզբունքով՝ շեշտադրելով գործնական գիտելիքը:

Ընդգրկված են նյութեր, որոնք վերաբերում են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, որը նպատակաուղղված է սովորողների ֆինանսական գիտելիքների, հմտությունների և համապատասխան վերաբերմունքի ձևավորմանն ու զարգացմանը: Աշխատանքի երկրորդ բաժինը նվիրված է 6-րդ դասարանի մաթեմատիկայի դասընթացում ինտեգրված ֆինանսական բաղադրիչի ծրագրային նյութի բովանդակությանը: Վերջինս ըստ դասարանի և ըստ թեմաների տրոհված է բովանդակային մասերի: Մասերից յուրաքանչյուրում ներկայացված են.

- ուսուցման ակնկալվող արդյունքները՝ արտահայտված գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի բնութագրիչներով,
- յուրաքանչյուր թեմային վերաբերող ֆինանսական հիմնական հասկացությունները և բովանդակությունը,
- մաթեմատիկական տիպական խնդիրների նմուշօրինակներ, որոնք արտահայտում են թեմային վերաբերող ֆինանսական իրադրություններ,
- թեմայի վերաբերյալ գործնական, խմբային, հետազոտական և նախագծային աշխատանքներ,
- տվյալ դասարանի մաթեմատիկայի ծրագրային այն թեմաները, որոնցում ինտեգրվելու է նախատեսված ֆինանսական բաղադրիչը:

Ծրագրի ներդրման սկզբնական շրջանում բարձր դասարաններում բովանդակության յուրացման տեսանկյունից դժվարություններ կառաջանան ավելի ցածր դասարաններում նախատեսված կարողությունների բացթողման պատճառով: Ուստի կարևորվում է ուսուցչի դերը սովորողներին ընթացիկ աջակցություն ցուցաբերելու և հնարավորության դեպքում ցածր դասարանների նյութը ուսումնասիրելու տեսանկյունից: Միաժամանակ, պետք է խուսափել տվյալ տարիքի երեխային ավելի բարձր դասարանների համար նախատեսված տեղեկատվություն հաղորդելու գայթակղությունից: Հանրակրթական ծրագրերի բովանդակության մեջ ֆինանսներին վերաբերող գիտելիքների ներառումը, իր հերթին, խթան կհանդիսանա նաև մեծահասակների (ուսուցիչների, ծնողների և այլն) ֆինանսական գրագիտության բարելավման համար, և արդյունքում բարենպաստ միջավայր կստեղծվի հանրային կյանքում անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ դրական վերաբերմունք ձևավորելու առումով: Հանրակրթական դպրոցներում ֆինանսական կրթության իրականացման արդյունավետ ուղիներից մեկը միջառարկայական ինտեգրումն է, երբ ֆինանսներին վերաբերող բովանդակային

նյութը ներառվում է գործող առարկաներից մի քանիսի ծրագրերում: Ինտեգրման մոտեցումը թույլ է տալիս, չավելացնելով դասաժամային ծանրաբեռնվածությունը, ֆինանսների կարևորությունը լուսաբանել ուսումնական տարբեր առարկաներում դիտարկվող իրավիճակների վերլուծության, օրինակների պարզաբանման և խնդիրների լուծման ընթացքում: Այդ տեսակետից առանձնահատուկ հնարավորություններ ունի մաթեմատիկայի դպրոցական դասընթացը, քանի որ, ունենալով շարունակական ընթացք (դասավանդվում է 1-12-րդ դասարաններում), բոլոր տարիքի սովորողների համար կարող է դիտարկել ֆինանսներին վերաբերող իրավիճակներ, հարցեր և խնդիրներ: Ընդ որում՝ այդպիսի ինտեգրումը բարենպաստ կլինի նաև հենց մաթեմատիկայի կրթական խնդիրների իրականացման առումով. Ֆինանսներին վերաբերող հարցերի շնորհիվ կամրապնդվի մաթեմատիկական կրթության բովանդակության կապը իրական կյանքի հետ, մաթեմատիկական վերացական հասկացություններն ու առնչությունները կփոխադրվեն կիրառական ոլորտ և այդպիսով կնպաստեն ուսումնական նյութի ընկալմանն ու սովորողների հետաքրքրասիրության մեծացմանը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ/ԲԱԶԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախորդ բոլոր թեմաների այն ֆինանսական և մաթեմատիկական հասկացությունները, որոնք անհրաժեշտ է տվյալ թեմայի շրջանակում ֆինանսական կոմպետենցիաները յուրացնելու համար: Օրինակ՝ Մաթեմատիկական տեքստային և հաշվողական խնդիրների լուծում:

(Բյուջե) Հիմնարկի հաստիքացուցակն ունի հետևյալ տեսքը.

ՊԱՇՏՈՆ ՀԱՍՏԻՔ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ

Տնօրեն 1 400,000.00

Հաշվապահ 1 270,000.00

Բաժնի վարիչ 3 250,000.00

Գլխավոր մասնագետ 3 200,000.00

Մասնագետ 5 150,000.00

Գործավար 2 100,000.00

Տնօրենն առաջարկում է նոր հաստիք՝ խորհրդատու, որի աշխատավարձի չափը որոշվում է բոլոր աշխատողների բնութագրիչ ցուցանիշներից մեկով կամ ըստ միջին թվաբանականի կամ ըստ մոդայի կամ ըստ մեդիայի: Դուր ո՞ր ցուցանիշն էք ընտրում բարձր աշխատավարձ ունենալու համար:

Լուծում. Եթե աշխատավարձի չափը որոշվի ըստ միջին թվաբանականի, ապա արդունքը կլինի հետևյալը. $(1*400,000.00 + 1*270,000.00 + 3*250,000.00 + \dots)/15 = 198,000.00$ Եթե աշխատավարձի չափը որոշվի ըստ մոդայի (առավել կրկնվող տվյալի), ապա արդունքը կլինի 150,000.00: Եթե աշխատավարձի չափը որոշվի ըստ մեդիայի, ապա արդունքը կլինի 200,000.00: Այսպիսով, բարձր աշխատավարձ ունենալու համար պետք է ընտրել մեդիայի ցուցանիշը:

- Թվաբանական գործողություններ, գործողությունների հասկությունները, աղյուսակներ, դիագրամներ, անձնական բյուջե, խնայողություն:

ՏԵՐՄԻՆՆԵՐ Ընտանեկան բյուջե – ընտանիքի եկամուտների և ծախսերի համադրությունը մեկ միասնական տեսքով որոշակի ժամանակահատվածի համար: Մշտական (հաստատուն) եկամուտ/ծախս – կայուն կերպով ստացվող եկամուտ, օրինակ՝ աշխատավարձ, կենսաթոշակ կամ միշտ կատարվող ծախսեր, օրինակ՝ կոմունալ: Բյուջեի տեսանկյունից հեշտ է պլանավորել: Ոչ մշտական (փոփոխուն) եկամուտ/ծախս – ժամանակ առ ժամանակ ստացվող եկամուտ, օրինակ՝ նվիրատվություն, կամ երբեմն առանց որևէ հստակ ժամանակացույցի կատարվող ծախսեր, օրինակ՝ հանգիստ: Բյուջեի տեսանկյունից հեշտ չէ պլանավորել, ուստի անհրաժեշտ է ունենալ որոշակի խնայողություն: Հրատապ ծախսեր – ծախսեր, որոնք ժամանակի ազդեցությամբ ցանկությունից վերածվում են կարիքի, օրինակ՝ ցանկալի է պարբերաբար հետևել առողջությանը, սակայն մարդիկ հակված չեն ծախսեր կատարել առողջության համար մինչև այն պահը, երբ դա դառնում է անհրաժեշտություն: Երկարաժամկետ ծախսեր – ծախսեր, որոնք պետք է կատարել մի քանի տարի հետո, սակայն կապահանջվի մեծ գումար, ուստի պետք է խնայել այսօրվանից սկսած: Ավանդ – գումար, որը Դուք ներդնում եք բանկում, իսկ բանկը պարտավորվում է վերադարձնել ներդրված գումարը և պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով դրա դիմաց վճարել տոկոսներ:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

- Տեխնոլոգիա, Մայրենի

ՀԱՐՑԵՐ ԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՀԱՄԱՐ

ա. Թվարկեք, թե որո՞նք կարող են հանդիսանալ ընտանեկան եկամտի աղբյուրներ:

բ. Ըստ առաջնահերթությունների ինչպիսի՞ ընտանեկան ծախսեր կան և դրանցից որո՞նք կարելի է չանել:

գ. Ինչի՞ց է ձևավորվում և ի՞նչ ձևով է կառավարվում ընտանեկան բյուջեն:

դ. Եթե ձեր ընտանեկան բյուջեի կառավարումը դրվեր ձեզ վրա, ինչպե՞ս կանեիք դա. թվարկեք քայլերը:

Մաթեմատիկական տեքստային և հաշվողական խնդիրների լուծում:

1 (բյուջե) Օգտագործելով ներկայացված տվյալները՝ կազմել ուղիղ և հակադարձ (դիագրամ պատկերելու կամ դիագրամից օգտվելու) խնդիրներ ընտանեկան բյուջեի վերաբերյալ:

Ծախսեր Գումար Տոկոսներ Դիագրամ

1. Մնունդ	2. Կոմունալ ծախսեր	3. Հագուստ	4. Տնտեսական ծախսեր	5. Տրանսպորտ	6. Խնայողություն
90000դրամ	40000դրամ	30000դրամ	8000դրամ	12000դրամ	20000դրամ
45%	20%	15%	4%	6%	10%

Ուղիղ խնդիր. Աղյուսակում ներկայացված է Արամի ընտանիքի ծախսերն ամսվա կտրվածքով: Օգտվելով աղյուսակում ներկայացված տվյալներից՝ գտնել, թե որքա՞ն գումար են հատկացնում Արամի ընտանիքում սննդի, կոմունալ ծախսերի, հագուստի, տնտեսական ծախսերի, տրանսպորտի վրա, և որքա՞ն խնայողություն են կատարում: Հակադարձ խնդրի Աղյուսակում ներկայացված է Արամի ընտանիքի ծախսերն ամսվա կտրվածքով: Օգտվելով աղյուսակից, ներկայացված ծախսերն արտահայտել տոկոսներով և կազմել համապատասխան շրջանաձև դիագրամը:

Այսօրվա մեկ դրամն ավելի թանկ արժե, քան վաղվանը. սա ֆինանսների կարևորագույն դասերից է, որը պետք է գալիս ոչ միայն մասնագետների, այլ նաև բոլոր սպառողներին, ովքեր մտածում են իրենց ունեցած փողն արդյունավետ տնօրինելու մասին: Մասնագիտական լեզվով այս երևույթը կոչվում է <> միևնույն դրամական մեծությունն այսօր ավելի մեծ արժեք ունի, քան ապագայում: Դա կատարվում է մի քանի հանգամանքների հետ՝ ա) այսօր ունեցած գումարը կարենի է ներդնել և դրանից ստանալ եկամուտ՝ ապագայում ունենալով ավելի մեծ գումար, բ) գնանի հետևանքով այն, ինչ կարելի է ձեռք բերել այսօր որևէ կոնկրետ գումարով, ապագայում կունենա ավելի բարձր գին, գ) եթե մեզ հարցնեն՝ կնախընտրեք արդյոք որոշակի գումար ստալ այսօ՞ր, թե՞ նույն գումարը ստանալ ապագայում,

պետք է, որ բոլորս նախընտրենք այն ստանալ այսօր, քանի որ ապագայի հետ չափազանց շատ անորոշություններ կան կապված: Դիտարկենք երկու իրավիճակ և կարևորենք ֆինանսական որոշումների կայացման հետ կապված առանձնահատկությունները:

1. Պատկերացրեք, որ Դուք ունեք որոշակի գումար, ասենք՝ 100,000.00 դրամ, և ցանկանում եք այդ գումարը ներդնել բանկում որպես ավանդ: Տարբեր բանկեր առաջարկում են տարբեր պայմաններ. ա) Տարեկան 12%, տոկոսները հաշվարկվում և ավելացվում են ավանդի մայր գումարին ամեն ամիս: բ) Տարեկան 13%, տոկոսները վճարվում են տարվա վերջում, ընդ որում՝ առանց ավանդի գումարի դրանք ավելացնելու հնարավորության: գ) Տարեկան 14%, սակայն ավանդային հաշիվը բացելու և վարելու համար գանձվում է տարեկան 5000 դրամ:

2. Այժմ պատկերացրեք ինքներդ Ձեզ ֆինանսական շուկայի հակառակ կողմում: Դուք ուզում եք վարկ վերցնել. Բանկերից մեկը, որին Դուք դիմում եք, համաձայն է Ձեզ տրամադրել 100,000.00 դրամ վարկ՝ ա) տարեկան 21%, բ) տարեկան 18%, սակայն գրավի գնահատման, վարկի սպասարկման, ինչպես նաև հաշվի բացման ու սպասարկման համար պահանջում է 15,000.00 դրամ ընդհանուր գումարով վճարումներ, գ) տարեկան 20%, սակայն վարկի մայր գումարի ամսական մարումներ իրականացվում և մայր գումարն ամբողջությամբ մարվում է վարկի ժամկետի վերջում:

Գործնական և հետազոտական առաջադրանքների դիտարկում:

Խնդիր 1 (գնումներ)

Համազգեստի գինը 12 000 դրամ էր: Օգոստոսին նրա գինը բարձրացավ 5%-ով, իսկ սեպտեմբերին՝ իջավ 10%-ով: Որքա՞ն դարձավ համազգեստի գինը սեպտեմբերին: Լուծում Օգոստոսին համազգեստի գինը կլինի $12000 + 12000 \cdot 5 / 100 = 12600$ դրամ, իսկ սեպտեմբերին համազգեստի գինը կլինի $12600 - 12600 \cdot 10 / 100 = 11340$ դրամ: **Պատ՝ 11340 դ.:**

Խնդիր 2(ավանդ)

Արթուրն իր խնայած 3 միլիոն դրամը, որպես ավանդ, մեկ տարի ժամկետով ներդրեց բանկում 14% տոկոսադրույքով: Տարին լրանալուց հետո, որքա՞ն գումար նա կստանա, եթե հայտնի է, որ ավելացված գումարի 10%-ը գանձվում է որպես եկամտահարկ: Լուծում Մեկ տարի հետո Արթուրի ավանդը կլինի $3000000 \cdot (1 + 14 / 100) = 3420000$ դրամ: Ավելացված գումարը կլինի 420 000 դրամ: Այս գումարի 10% եկամտահարկը կլինի՝ $420000 \cdot 10 / 100 = 42000$ դրամ: Արդյունքում Արթուրը կստանա՝ $3420000 - 42000 = 3378000$ դրամ:

Պատ.՝ 3378000 դ. :

Խնդիր 3 (գնումներ, պարտք)

Խանութի ամսական, առանց կանխավճարի վճարումը է 279 000 դրամ արժողությամբ համակարգիչ՝ պայմանով, որ պարտքը պետք է փակվի 9 ամսվա ընթացքում: Շուշանը գիտեր, որ խելամիտ կլինի, եթե ամսական պարտքը չգերազանցի եկամտի 30%-ը: Հարմար է նրան գնել այդ համակարգիչը, եթե իր եկամուտը ամսական կազմում է 110 000 դրամ: Լուծում. Շուշանը յուրաքանչյուր ամիս պետք է վճարեր $279000 \div 9 = 31000$ հազար դրամ: Նրա եկամտի 30%-ը կազմում է $110000 \cdot 30 / 100 = 33000$ դրամ: Քանի որ $31000 < 33000$, ուրեմն Շուշանին հարմար է գնել համակարգիչը: **Պատ.՝ այո:**

Խնդիր 4(վարկ)

Անհատ ձեռներեցին հարկավոր էր մեկ տարով 5 միլիոն դրամ վարկ վերցնել: Նա պարզեց, որ «Ա» բանկը կարող է ցանկացած չափի վարկ տալ տարեկան 18% տոկոսադրույքով, իսկ «Բ» բանկը վարկ է տալիս՝ մինչև 2 միլիոն դրամի դեպքում 17%, իսկ 2 միլիոն դրամից ավելիի դեպքում 19% տոկոսադրույքով: Ինչպիսի՞ ընտրություն կատարի ձեռներեցը, որպեսզի վարկի համար վճարելիք ծախսը լինի նվազագույն: Հաշվել այդ ծախսը: 9 Լուծում Ուսումնասիրելով երկու բանկերի կողմից առաջարկվող վարկի տեսակները, անհատ ձեռներեցը, ծախսը նվազագույնը լինելու համար, պետք է 2 մլն. դրամ վարկ ձևակերպի \diamond բանկում, իսկ մնացած 3 մլն. դրամը՝ \diamond բանկում: Արդյունքում ծախսը կլինի. $2000000 \cdot 17 / 100 + 3000000 \cdot 18 / 100 = 880000$ դրամ :

Պատ.՝ 880000 դ. :

(Գնաճ) Ընտանիքում ներկայումս սննդի, հագուստի և այլ կենցաղային նպատակների համար կատարվող ընթացիկ ծախսերը կազմում են միջինում ամսական 160,000.00 դրամ: Կանխատեսվում է, որ հաջորդ տարիներին գնաճը տարեկան կլինի 4,5%: Գնաճի հետևանքով միջինում որքա՞ն կդառնա ընտանիքի ամսական սպառումը. ա) 1 տարի հետո, բ) 2 տարի հետո, գ) 4 տարի հետո: Լուծում Ընտանիքի ամսական սպառումը՝ ա) 1 տարի հետո կլինի՝ $160,000.00 \cdot (1 + 45/100) = 167,200.00$ դրամ բ) 2 տարի հետո կլինի՝ $160,000.00 \cdot (1 + 45/100)^2 = 174,724.00$ դրամ գ) 4 տարի հետո կլինի՝ $160,000.00 \cdot (1 + 45/100)^4 = 190,802.96$ դրամ

(Բյուջե) Երիտասարդ ընտանիքը նախորդ տարում եկամտի մոտ 44%-ը ծախսել է սննդի, մոտ 16%-ը՝ ոչ սննդային ապրանքների և մոտ 30%-ը տարբեր տեսակի ծառայությունների վրա, իսկ 10%-ը խնայել է: Լրացուցիչ կենցաղային տեխնիկա ձեռք բերելու նպատակով ընտանիքի անդամները հաջորդ տարում 4-ական տոկոսով նվազեցրին սննդի ու ծառայությունների ծախսերը, բայց խնայողությունը շարունակեցին կատարել նույն չափով: Որքա՞ն էր այդ ընտանիքի եկամուտը, եթե տարեվերջին պարզվեց, որ ոչ սննդային ապրանքների ծախսը կազմել է 576,000.00 դրամ: Լուծում Սննդի և ծառայությունների ծախսերը 4-ական տոկոսով նվազեցնելուց և խնայողության չափը պահպանելուց հետո, ոչ սննդային ծախսերը մեծանում են 8%-ով և դառնում 24%: Հայտնի է, որ ոչ սննդային

ապրանքների ծախսը կազմել է 576,000.00 դրամ, որը ընտանիքի եկամտի 24%-ն է: Այսինքն՝ ընտանիքի տարեկան եկամուտը կազմում է $576,000.00 * 100/24 = 2,400,000.00$ դրամ, իսկ տարեկան եկամուտը կլինի $2,400,000.00 / 12 = 200,000.00$ դրամ:

Ե զ ր ա կ ա ց ու թ յ ու ն

Եզրակացություն. Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում կարևոր նշանակություն է տրվում ֆինանսական նյութի ուսուցմանը: Ուսուցչի կողմից մեթոդապես գրագետ ու համակարգված ուսուցման կազմակերպումը նպաստում է սովորողների մտավոր ու ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև՝ յուրացված գիտելիքների խորը և իմաստավորված ընկալմանը: Այսպիսով, ֆինանսական կրթությունը կարևոր դեր է զբաղեցնում մաթեմատիկայի դասընթացում և առհասարակ դպրոցական ուսուցման գործընթացում: Նպատակը իր հերթին նպաստում է սովորողների հիշողության հարստացմանը, աշխարհայացքի ընդլայնմանը, գիտելիքների համակարգմանն ու ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը

- Ընդգծել սերտ կապը գիտությունների, ինչպես նաև մաթեմատիկայի և շրջակա աշխարհի հետ, ➤ Նյութը ձևավորել վառ հասանելի, առօրեական և հիշվող օրինակներով,
- Ուսուցման արդյունքում աշակերտը պետք է կարողանա տեղեկություն ստանալ առաջադրված աղյուսակներից, կազմի աղյուսակներ, դիագրամներ, չափումների արդյունքում պետք է հաշվի միջինը:
- Այս ամենը, անպատճառ կնպաստի պարզ, բայց և սկզբունքորեն նոր հասկացությունների ուսուցմանը, սովորողների շրջանում մաթեմատիկայի հանդեպ հետաքրքրության աճին, ժամանակակից աշխարհընկալմանը և օրեցօր զարգացող տեղեկատվական աշխարհում կողմնորոշման հմտությունների ձևավորմանը:

Գականության ցանկ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ